

սուս ենք «երեւոթապէս», որովհետեւ իրօք եւր չէ, որ սղում ու չքանում է, այլ ինչ- «պճղան, սոցան» եւ նրանց նման սեռա- կանները *պնիզն, *ասիզն, կորած ձեւերի թեքումներն են. ձեւեր, որ մնացած են մէկը հին ու միւրը նոր լեզուի մէջ և կորցրած կերպարանքով. հմմ. պնիզ եւ ասիզ (Թիֆլիս):

Ն. ԱՂՐՈՂԵ



ՓՈՐՈՆՔՆԵՐ ԶՈՒՂՈՎՆԵՐ ԵՒ ՀՆԳՎՈՎՆԵՐ ԲՆՆՃՅՐԻՍՈՒԹԻՒՆՅՈՒՆ

(Տարեր եւ ժողովուրդական սրգեր):

(Շարունակութիւն)

Տարերս, որոնք լոյս կը տեսնեն հոս, հաւաքած է Ա. Երեմեան Պարսկաստանի հայ ժողովրդեան բերնէն. անոնք յօրինուած են հայ աշուղ-տաղասացներէ, եւ կը ներկայաց- նեն հայ ժողովրդեան ընտանեկան մրմունջ- ները, միջնադարեան տաղասացներու ոգով, տեղ տեղ նաեւ բառերով եւ տողերով: Պահե- ցինք ամբողջութիւնը անվար, իբրեւ ան- գիր բանահիւսութիւններ, իբրեւ նիւթեր հայ ազգագրութեան համար: Գաւառական եւ օտար բառերու բացատրութիւնը պիտի գտնեն ընթերցողները հաւաքման վերջը:

Խմբագր. «Հանդէս Ամսօրեայ»ի:

1. ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

ա. Իմ կարմիր-կանաչ:

Իմ կարմիր-կանաչ նաչխուն բլբուլ, իջիր ի բազն,
Առաւօտուն ծաղկունքներն բացվէլոյ չաղն,
Ե՛կ, գնանք, նստենք սալվու չիման ջրի զբազն:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

Ա՛յ, բարով եկիր, հազար բարի, հօօր դու ինձ խուր,
Ե՛կ, կշտիս նստիք, երեսդ բաց, ինձ ուրա- խացուր,
Խեղդ խօսման ամ, ամանջման ամ, դէ՛ մին ջուղար տուր:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

Ես քեզանից ձեռ չեմ վեժման, քանի որ սող եմ,
Անուշ խօսքերիդ, քաղցր լեզվիդ, ջա՛ն, ես մատաղ եմ,
Բացվել ա ծոցիդ կարմիր վարդն, դէ՛ բաց, թո՛ղ քաղեմ:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

Աղորդ որ ջահէլ եար սիրելն շատ ունի ջափայ,
Շիւրացուցէլ, ավզալ շինել աս, դալում բերաֆա,
Ծառ չեմ, որ մին էլ նոր կանաչեմ, զօլվ առնեմ սաֆայ:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

Սիւհ ծամերդ թիկնամիջիդ շարէլ աս դաս- տայ,
Շիւրացուցէլ աս, ավզալ շինել աս բազում նովխաստայ,
Ձալում ինչ կընի դարուլ անես մին երկու փաստայ:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

Քո սէրն իմ սրտունն ա վառ, չուր յե՛փ կանես նաղ,
Մէջլիւն դձած, զարդարած դարանֆիլ աս աղիդ եար,
Նարզիդ, սնրուլ, ուհան, վարդ-ծաղիկ աս խանութ եար:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

Ծով-ծով աչքերդ, ա՛յ իմ խանութ, ինձ բիհուշ անութ,
Չո՛ւմ ախ աս տալման, նաղ անելով յեանէս վիշ անութ,
Խօրոված սրտիս յե՛փ դեղ կանես անիրաւ դալում:
Ա՛յ իմ խանութ-ջանութ,
Խեղքս աս տանութ:

բ. Երբունքդ լաւ գինու քաս:

Յատկապէս քեզի սիրել ամ,
Սիրովդ յոյժ խորովել ամ.
Ունեմ սէր, քո սրտին հարցու,
Ուրախ դէմքդ առ ինձ դարձու:
Վասն է՞ր աս պահում ինձ լալով,
Վաղար ունեմ երկու տարով.
Հարաս լուս դէմքդ դաղում աս,
Հայե՛ֆ մէջ սրտիս դաղում աս:
Աննման տեսօք ես փէրի,
Աչքերիդ ելել ամ դերի.
Նազովդ ինձի երում աս,
Նոան ծառ սրտիս տիրում աս:
Էս ջարբն ինձի հարաս ա,
Շրթունքդ լաւ գինոյ թաս ա.
Սիրակա՛ն, սիրով աննման,
Սիրոյդ ծով ընկայ բեզուման:
Յատկապէս քեզ որ տեսման ամ,
Ծածուկ սիրով տապակման ամ.
Աչքերդ հոգիս կու հանէ,
Նոր սիրտդ առնա՛մ կընկանէ:

է՛յ դալմ սէր ունես ասա՛,
Յունքերդ սիրուն կամար ա.
Ա՛յ անիրաւ չո՛ւմ չես ասում,
Սիրելոյդ կարօտ աս պահում:

Քաղցր դէմքդ երբ դաղում աս,
Ջրիւն սիրտս ջան դաղում աս.
Իմ քաղցրիկ սէր, կամդ ասա՛,
Սիրելոյդ վերայ դու ողորմայ:

Սիրոյդ յէջիսն ելայ դերի,
Ասա՛ սէր քո, ինձ սիրելի.
Մոռաման չիմ ես քո սէրն,
Ո՛ւմ ասեմ ես իմ դարդէն:

Մին մտածում չես դու ինձ համար,
Որ ուզում ամ քեզ անդադար.
Աղորդ ասա՛, միտդ ի՞նչ ա,
Իմ կամն քեզ լա՛ւ յայտնի ա:

Ես քո սիրէն չեմ կուշտաման,
Սաստիկ սիրով ամ տապակման.
Տրտում սրտով ման ամ գոլման,
Մզամ թէ՛ դու չե՛ս իմաման:

Նարնջի դէմքդ փայլման ա,
Սիրտս սիրովդ երման ա.
Փրկի՛ր ինձ էս ցաւից շուտով,
Ա՛յս, կմեռնեմ համբերելով:

Ո՛վ աննման, սէրդ իմ ասա՛,
Աչքերդ սիրուն շուշան ա.
Ա՛յ դալմ քեզ որ տէսման ամ,
Յաւերս ողջ մոռաման ամ:

Սէ՛ր իմ, սէ՛ր իմ, ո՛վ աննման,
Ինձ կը մնաս դու յաւիտեան:
գ. Առաւօտուց:

Առաւօտուց ելնեմ լալով,
Քո լոյս երեսին տամ բարով.
Ուրախ երեսիդ ականելով
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Լոյս երեսդ երբ դաղում աս,
Ջգարիս մէջն դաղում աս.
Սուր դանակով սղանում աս,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Դու վարդի ծառ, ես բլբուլ ամ,
Սիրոյդ էջիսն ես վառման ամ.
Նոներդ բաց շատ սիրել ամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Տուած ընծայդ պատուական ա,
Քան զվարդն գովական ա.
Լուսնիակի նման փայլման ա,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Գովեմ սիրելոյս ման դալն,
Շիւրացոյց ինձ սյդ նոր խալն.
Նայի՛ր սիրտս, տես իմ հալն,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Ա՛յս քաչելով ման ամ գոլման,
Սիրելի՛, քեզի գտանեմ,
Մրտիս փափազն լցուցանեմ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Կանաչ բաղձում ես քեզ տեսայ,
Մէջլիսում բազմեալ տեսայ.
Սիրելի՛, սրտովս հավանեցայ
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Շատ սիրահար խեղճ բլբուլ ամ,
Անուշահոտոյդ դերի ամ,
Որպէս ծարաւի ջրի ամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Ես քո սիրէն կուշտաման չեմ,
Սէ՛ր քեզանէ բաժանման չեմ.
Առանց քեզի դաղարման չեմ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Իմ սէրն քեզ շատ հաստատ ա,
Նման արեւի փայլման ա,
Քեզ սիրողն եմ ուղղալ ա,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Սիրոյդ էջիսն ես երվել ամ,
Ես՛ր, քո սիրէն մոլորվել ամ,
Կեանքս կեանքիդ խէտ կապել ամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Աչքեր ունես խումար-խումար,
Յունքերդ կապել աս կամար.
Ես քո սիրէն ամ խելագար,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Կեռքնիդ անդին մարգարիտ,
Թամամէլ աս տասնորս տարիդ,
Մանեմ բաղչէդ քաղեմ բարիդ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Մատներ ունես մոմէ թափած,
Քեզի նման էլ չեմ տեսած.
Լոյս քո սիրէն ամ ես հալած,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Ա՛յս քաչելով քեզի հասայ,
Մինչ քո սէր յաւել տեսայ,
Մեռեալ էի, կենդանացայ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Բոպէ բոպէ ես հարման ամ,
Ուրախութենէ դողման ամ.
Էջիսովդ ես տապակման ամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Ես կ'ընկվեմ քեզնէ լալով,
Վաղայ դնեմ երկու տարով.
Կը թողում քեզ լալով, լալով,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Աղորդ որ ես դժված ամ,
Համ կենդանի՝ համ մեռած ամ,
Տեսող վերայ շիւղացած ամ,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

Հագիլ շորն կարմիր ալ ա,
Քո պատկերն թամամ խալ ա.
Կարմիր թէքը ինձ արա՛,
Տաղէ բէ տաղէ նով բընով:

դ. Ես քո սիրոյն:

Ես քո սիրոյն մայիլ ելամ,
Խէլք ու միտքս կորցրել ամ,
Ճանապարհս մոլորել ամ,
Թէ դո՞ւ տեսնեմ քեզի ազի՛դ:
Ամա՛ն, ամա՛ն ես քո սէրէն:
Բիզադ աման ես քո սէրէն:

Քաղցր լեզուդ ինձի խալէց,
Խէլք ու միտքս գլխէս քաշէց.
Թամամ ջանս խալէց, մաշէց,
Քո խօշտար ու խաղն ազի՛դ:

Սոսման ամ, ջուղար չես տարման,
Փառակդ բռնէլ ամ լարման.
Ինձ խարելով անց աս կարման,
Ախրին խղճա ինձի ազի՛դ:

Չուր յե՞՞փ ես խոր խոզէց խանեմ,
Ասա՞ յե՞՞փ դու ինձ ճար կանես.
Գուցէ գեռ էլ յետացանես,
Մի՛ մոռանար դու ինձ ազի՛դ:

Քո աչքերն բրձի ջահ ա,
Յունքերդ արմազ ջուհար ա.
Ելայ քեզ ծառայ, ինչ կ'ուղես արա,
Ճար խնդրեմ քեզնէ սիրուն ազի՛դ:

Գիշեր, ցերեկ կողբամ լալով,
Հողիս մաշվէց այս քաշելով,
Տուր ինձ համբոյր լուս երեսէդ,
Առնում փափագս ի յոյժ սիրէդ:

Ես քո սիրոյն խորովման ամ,
Կրակ ու բոցում փամման ամ.
Վա՛յ ինձ քեզնէ հեռաման ամ,
Ելայ կարօտ քեզնէ ազի՛դ:

ե. Վարդագոյն երեսդ:

Վարդագոյն երեսդ ա փայլման,
Սիրակա՛ն, աման.

Սյու տաղն իր հիւսուածքով աշուղական երգի նկարագիր ունի եւ աւելի յիշեցնում է պարսկահայ աշուղ Ամիր օղլու լեզուն եւ ոճը: Շատ հաւանական է նրա կորած անտիպ տաղերից մէկն է:

Դու վարդ աս, բիւրիւլի նման.
Քանի խնդրեմ, ամա՛ն, ամա՛ն,
Ամա՛ն, ե՛կ բաղչէն,
Այս ա լաւ վախտը,
Բացուէլ ա վարդը:

Վարդ գլուխդ դարդարէ՛,
Սիրակա՛ն, աման.
Ե՛կ իմ խնդրքս կատարէ՛,
Ինձ այս դարաէս ազատ արէ՛:

Սիրակա՛ն, ամա՛ն,
Ամա՛ն, եկ բաղչէն,
Այս ա լաւ վախտը,
Բացուէլ վարդը:

զ. Բարով, հագար բարի:

Բարով, հագար բարի, իմ սիրած բլրուլ
Իմ սիրած բլրուլ:
Բերե՞լ աս թաղայ նուշ՝ բար ինձի համար:

Ծոցիդ ունան դօնչայ վարդն ա բացվել,
Վարդն ա բացվել.
Իմ ետրի թամաշէն՝ բեր ինձի համար:

Եա՛ր, դու կը նմանես վարար գետէրի,
Վարար գետէրի.
Ղուրբան ծով-ծով աչքիդ՝ յունքիդ նետերին:

Աչուզն ինչ կառի քեզ նման փէրին,
Քեզ նման փէրին.
Դարձէլ աս ամայլու՝ դար իձի համար:

Աչուզն խէլք ունի, վեր կէնայ ման դոյ,
Վեր կէնայ ման դոյ.
Քո հալած մաշածն քեզ տեսնի՝ ջան դոյ:

Աչքը հագար սիրով քո դռան ման դոյ,
Քո դռան ման դոյ.
Դարձէլ աս արկաթ ու քար ինձի համար:

Ոչ ով չիմացաւ քո դրած դաղերին,
Քո դրած դաղերին.
Դուրունդաղ աս դարձէլ սրտիս դրարին:

Բլրուլ հագարանի նստուէլ ան քո բաղին,
Նստուէլ ան քո բաղին.
Ծառդ ամ բռնէլ կանաչ՝ բար ինձի համար:

է. Թո՛ղ այգիդ մտնիմ:

Թո՛ղ խաթուն, այգիդ մտնեմ,
Ծաղկունքդ պայծառ՝ գտնեմ.
Սարլի բոյլ ես տեսանեմ,
Քո լոյս երեսն համբուրեմ:

Քաղցր սիրովդ ինձ էրեցիր,
Քո լոյս երեսդ գաղեցիր.
Ինձ տեսիր, աչքդ թեքեցիր,
Սիրտս սիրովդ գաղեցիր:

Առաւօտուց այգիդ մտայ,
Հանդէպ վարդին քեզի տեսայ.
Ծով աչքերուդ մայիլ ելայ.
Հէշիդ հետնէն մոլորեցայ:

Գիշեր, ցերեկ չունիմ դաղար,
Միշտ կու շրջիմ ես անդաղար.
Վոնց գտանեմ մին անդին քար,
Որ քեզ լինի բարէբար:

Թէ որ մին էլ քեզ տեսանեմ,
Նոր բացված ծաղկունքդ քաղեմ.
Վարդ-մանուշակ քեզ ընծայեմ,
Սիրովդ սիրտս լցուցանեմ:

Ղուրբան երիմ լուս պատկերիդ,
Ձլինի տաս ինձի գերի.
Ծառէդ ամ ես խանում ջանի,
Իմ սիրելի, իմ գովելի:

ը. Նաշխուր բլրուլ:

Սիրով հարցուր նաշխուն բլրուլ,
Կարօտ ամ ես կնկուզ վարդիդ.
Նման տատարակի ես դարձայ,
Վարդիդ վերէն ես շիւղացայ:

Ձահէլ աս դու խաթուն ջանի,
Քո սէրն ինձ կու սպանի.
Ազաշանօք քեզնէ խնդրեմ,
Ձթուցուս զիս կարօտ մեռնեմ:

Ձլան ուճրս յանց ա կարման,
Ես քո հէշիտցն ամ լարման.
Ռահմարա քեզի Ղուրբան,
Չորաման ա այգուդ վարդն:

Ձարմանալի ա քո սէրն,
Մշտապէս ի քո ընկերն.
Սոցերովդ սիրտս դաղված ա,
Քո խօսքերն սիրուն թար ա:

բ. Դու նոսն ծառ:

Դու նոսն ծառ, քաղեմ նոնէդ,
Արմազ բողբոսիդ կապեմ կոնէդ.
Մուրադս տո՛ւր, զնամ դոնէդ:

Նաղու գլխա՛ր, պատուական աս,
Քո արեւն, սիրական աս:

Ձեր բաղունն ծառ անկուզի,
Աչքս տեսնի, սիրտս կուզի,
Քո մօրն ասա՛, ինձի սիրի՛:

Ձեր դռանը կանգնած զուլ ամ,
Յե՛փ քեզ տեսնեմ՝ նստեմ կու լամ,
Ձուզարս տուր, վեր կամ գնամ:

Ես ամ գորման հարեւանայ,
Քամի առնեմ՝ սիրտս բանամ:

Եա՛րար եարս ո՛ւմ տանն ա,
Խաղ ասեմ՝ ձէնս իմանայ:

ժ. Սիրուն եարս:

Սիրուն եարս քեզի ցանկամ,
Դէ՛ժքդ ա անուշ վարդի նման.
Ծով աչքերուդ ես կարօտ ամ,
Առ նշանս՝ քեզի տամ:

Հարակո որ քեզի տեսայ.
Սիրոյդ ես գերի ելայ.
Մեռնիմ կամար ունքիդ վրայ,
Որ սրտիս նետէր կու տայ:

Բորբոքեցիր իմ սէրն,
Ձե՞ս տեսնում իմ ցաւէրն.
Յե՛փ կ'ընեմ ես քո տէրն,
Որ թողում էս դարդէրն:

Ո՞վ է քեզի նման,
Գեղեցիկ ես, պատվական.
Խղճա ինձ ա՛յ սիրական,
Ծաղկել աս դու վարդի նման:

ժա. Մնաս բարով:

Մնաս բարով գնաման ամ,
Եա՛ր, քեզանէ հեռաման ամ,
Քո սիրովն ես տապալման ամ:

Ձեր գուռն ա աովի վերայ,
Պոնչկիդ վարդի թեր ա,
Ժամի օրհնանքն քեզ վերայ:

Քուշա գլխին եալ կու կապես,
Մէջքդ բարակ շալ կու կապես,
Աչք ու յունքով մարդ կու խարես:

Գնաման ամ ծովը մտնեմ,
Թամամ աշխարհն պտրտեմ,
Օրհնի՛ր, յեա դամ, քեզ խաղտեմ:

Մնաս բարով գնաման ամ,
Եա՛ր, քեզանէ հեռաման ամ,
Քո սիրովն ես վատման ամ:

ժբ. Հալա ես իմ եարս կ'ուզեմ:

Յերկնքում մին դուչ անցաւ,
Ղչիս նման չէր,
Ոտնունն ունէր ոսկէ գնջիլ,
Քարին նստման չէր,
Արբիշում խալի փուռմ,
Կանչում էր, գորման չէր:

Հալա ես իմ եարս կ'ուզեմ,
Ձեռ չեմ վեր առման,
Ճրայ ձեռնիս նորա հետնէն
Ման ամ գորման,
Ա՛յ, ամա՛ն, ամա՛ն,
Ավդալ ամ դատման:

